

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/7

25 հունվարի 2013թ.

Քննարկվեց <Խճաքար-Մուսա> ՍՊԸ 08.01.2013թ-ի թիվ 2-01/13 դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ 26.12.2012թ. թիվ 1002758 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.08.2012թ. թիվ 1002758 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Խճաքար-Մուսա> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 26.12.2012թ-ին կազմվել է թիվ 1002758 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 10.185.289 դրամ:

<Խճաքար-Մուսա> ՍՊԸ գանգատը վերաբերվում է ստուգման ակտով հաստատագրված վճարների գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությանը:

<Խճաքար-Մուսա> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ստուգման ակտի 8-րդ կետում՝ հաստատագրված վճարների ճշտության ստուգման մասով արձանագրվել է, որ <Խճաքար-Մուսա> ՍՊԸ-ն 13.05.2009թ.-ին դիմում է ներկայացրել հարկային տեսչություն Երևան քաղաքի Տիչինա փողոցի 140 հասցեում գործող գազալցակայանի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ և հաստատագրված վճարը հաշվարկել է մինչև 13.05.2009թ.: Էջմիածնի ՀՏ-ի պետի 12.05.2009թ.-ի թիվ 2308499 հանձնարարագրի համաձայն 14.05.2009թ.-ին կազմված տեղեկանքի համաձայն Տիչինայի 140 հասցեում գործող գազալցակայանը գործում է 4 գազալցախողովակով: Արդյունքում ընկերությունը մայիս ամսվա համար պակաս հաստատագրված վճար է հաշվարկել և վճարել 3483900 դրամ, որը հաշվարկված տույժերի և տուգանքների հետ միասին կազմել է 7481675 դրամ:

Ստուգման ակտի 8-րդ կետում հաստատագրված վճարի մասով արձանագրված լրացուցիչ 7481675 դրամ պարտավորությունը սխալ է արձանագրվել, չի համապատասխանում իրականությանը, չունի իրավական հիմք:

Ընկերության կողմից գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ Էջմիածնի ՏՀՏ-ին հայտարարություն է ներկայացվել 13.05.2009թ.-ին: Ստուգման ակտում ստուգում իրականացրած պաշտոնատար անձինք հղում են կատարել 14.05.2009թ.-ին կազմված ինչ որ տեղեկանքի: Եթե ՏՀՏ-ի պետի հանձնարարագրի համաձայն կատարվել է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության ստուգում, և այդ ստուգման արդյունքում եթե հայտնաբերվել են խախտումներ, ապա ի՞նչն է եղել պատճառը, որ չի կազմվել համապատասխան ակտ և չեն առաջադրվել լրացուցիչ պարտավորություններ, կամ անձնական հաշվառման քարտում պետք է հաստատագրված վճարի գծով լրացուցիչ պարտավորություն իջեցվեր: Եթե առկա է եղել խախտում ինչու համապատասխան արձանագրություն չի կազմվել և չի ներկայացվել ընկերության ղեկավարին (կամ փոխարինող անձին): Այդ տեղեկանքի մասին ընկերությունը իմացել է միայն ստուգման ընթացքում՝ ստուգում կատարող պաշտոնատար անձանցից բանավոր ձևով, այն մեզ անգամ ցույց չի տրվել:

Այդ տեղեկանքը չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդ նույն ժամանակաշրջանում ընկերությունը դադարեցրել էր իր գործունեությունը՝ տեխնիկական

անվտանգության նկատառումներից ելնելով իրականացվող նորոգման աշխատանքների պատճառով: Բացի այդ, նշված ժամանակաշրջանից անցել է երեք տարուց ավել ժամանակ, իսկ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30՝ հոդվածի համաձայն, հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է ստուգման ակտի 8-րդ կետով հաստատագրված վճարի գծով հաշվարկված պարտավորությունը հանել ընկերության վրայից:

«ՀԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն «ՀԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 12.05.2009թ. թիվ 2308499 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Խճաքար-Մուսա> ՍՊԸ-ում կատարվել է հաստատագրված վճարների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության և վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում:

Հաստատագրված վճարների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության ստուգման գծով ստուգվող ժամանակաշրջանն ընդգրկել է 22.03.2005թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակահատվածը, և քանի որ ստուգման արդյունքում 14.05.2009թ-ին կազմվել է տեղեկանք, հետևապես ստուգվող ժամանակաշրջանն ընդգրկել է 22.03.2005թ-ից մինչև 14.05.2009թ. ընկած ժամանակահատվածը:

<Խճաքար-Մուսա> ՍՊԸ կողմից 13.05.2009թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ է ներկայացրել դիմում, որով մասնավորապես հայտնել է, որ ընկերության ք.Երևան, Տիչինա փողոցի 140 հասցեում գտնվող գազալցակայանի գործունեությունը 13.05.2009թ-ից դադարեցնում է: Նշված դիմումը նույն օրը՝ 13.05.2009թ-ին, մուտք է եղել Էջմիածնի ՏՀՏ (դիմումի վրա առկա է ՏՀՏ մուտքի ամսաթիվը և համարը):

Համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի (2009թ-ին գործող խմբագրությամբ). «Ստուգման արդյունքներով կազմվում է ակտ՝ երկու օրինակից, ... , խախտումներ և թերություններ չհայտնաբերելու դեպքում կազմվում է տեղեկանք, ...»:

Քննարկվող դեպքում ընկերությունը 13.05.2009թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ ներկայացված դիմումով հայտնել է ք.Երևան, Տիչինա փողոցի 140 հասցեում գտնվող գազալցակայանի գործունեությունը 13.05.2009թ-ից դադարեցնելու վերաբերյալ, սակայն հաջորդ օրը՝ 14.05.2009թ-ին, ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 12.05.2009թ. թիվ 2308499 հանձնարարագրով իրականացվող ստուգման շրջանակներում, ստուգող անձանց կողմից կազմվել է տեղեկանք, որով արձանագրվել է վերոգրյալ հասցեում գտնվող գազալցակայանի գործունեության փաստ: Հետևապես, ստուգման արդյունքում պետք է կազմվեր ոչ թե տեղեկանք, այլ ստուգման ակտ՝ ընկերության կողմից գործունեության դադարեցման դիմում ներկայացնելու պարագայում փաստացի գործունեություն իրականացնելու վերաբերյալ, կիրառելով խախտումից բխող պատասխանատվության միջոցները:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.08.2012թ. թիվ 1002758 հանձնարարագրով

իրականացվող ստուգման շրջանակներում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք իրավասու չէին անդրադառնալ 14.05.2009թ-ին կազմված տեղեկանքով արձանագրված փաստին, քանի որ 14.05.2009թ-ը հանդիսացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 12.05.2009թ. թիվ 2308499 հանձնարարագրով իրականացվող ստուգման վերջին օրը: Հանձնաժողովի համոզմամբ, նման իրավասություն, ըստ էության, կվերապահվեր միայն վերստուգման հանձնարարագրի առկայության պայմաններում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ արկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ 26.12.2012թ. թիվ 1002758 ստուգման ակտի 8-րդ կետը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

